55. ԴԴՄԵՆԻ ԱԽՉԻԿ

Կէղնի, չէղնի կնիկըմ ու մարդըմ կէղնի, էնդոնց ճիժ չէղնի։

Ժամանակըմ կընցնի էդ մեշտեխ, կնիկ կէլնի կէրթա բոսթան, կհընկնի բոսթնի մեջ օլըրդի, օր ղուր սիրտ բանա, ինք ուրին կասե.—Տեր իմ աստված, ես էդա բանջըրներու չա՞փ լէ չէղա, դդում թուռա տվեր է, ձմերուկ տվեր է, խըյար տվեր է, թուռեմ՝ լէ ես հ՝ո՞րի պիտի չիտենք։

Էդ խոսքի մեջն էր, դդումըմ փրթավ ուր թանթեց ու հ՝ընկավ կնկա հ՝ետևեն.—Նանե՛, դո՞ր կէրթաս։

Կնիկ մաթ ու շիվար կէղնի, կանի. քանիմ՝ հեղ օր հ՝ետևեն կբոռա, կվերցու զարկե հ՝անթե տակ, խնդանա վրեն ու առնե հ՝իգա տուն։

Կբերե տուն, քանիմ՝ օր կմնա, կասե. «Տանիմ դնիմ վարժատուն, օր կարդա»։ Կառնե, կտանե դնե վարժատուն։

Ախչկներ էդ Դդումին լազաթ չիտեն, հ՝ըմն օր կծեծեն։ Էկավ մոր գանգատ.—Նանե՛, ախչկներ ընծիկ լազաթ չիտան, չըն թողի ուրանց հետ խաղամ, զծամերս կքաշին, գլխուս կզարկին։

Մերն հ՝էլավ, վազեց գնաց վարժատուն, ախչիկներուն թանպի էրեց, օր ուր Դդմին չկպին։

Օրերուց օրըմ էդ Դդումն է, կհ՝էլնի ախչիկներու հետ հ՝աղբուր կէրթա, կէրթա թագավորի բազչի տակ, ախչկներ զուրանց կժներ կհ՝ըլնան, օր կդառնան, Դդում կմնա հ՝ոդի։ Ախչկներ օր քիչըմ կհեռանան, կհանե զուր դդմենի հալվըներ, կէղնի հուրնիկ-

Հրեղեն ախչիկը, մազ կիտա կրակ, հրեղեն ձին կկանի հ՝առեշ, կհեծնի ու կէրթա թաղավորի խաս բաղչի մեջ, կէրթա ու կիգա։

Թագավորի տղեն լէ փանշարեն տափուկ կէղնի օր կտեսնա զէդ ախչիկ, կասե. «Իմ օր կա՝ էդ է, չկա՝ էդ է»։

Ախչիկն օլըրդավ, էկավ ձիուց հ՝իջավ, զարկեց ձիու սաղրուն, ձին դնաց ուր տեխ, հանեց զուր հալավ, հագավ դդմենի հալվըձեր, լցեց զուր կուժ, դարձավ էկավ։

Թագավորի տղեն տեսավ օր ախչիկ հագավ զուր դդմենի հալվըներ գնաց։ Հ՝էլավ մոր ասեց.—Նանե՛, ես կկարգվիմ։

— Կկարգվի՞ս, ղվո՞ր կառնես։

Տղեն ասեց.— Ես զդդմենին կառնիմ։

Մերն ասեց.—Հա՛յ, հավար, հայ մադաթ, դու թագավորիմ՝ տղա իս, էդ ի՞նչ սև թոֆան էր էկավ մըր վրեն, մարդ զդդմենին լէ կառնե՞։

Ինչ էրեց, տղին լեզու չկոցավ հասկըցուց։ Ճար ուրանց կըտրավ, հ՝էլան գացին հ՝ուզեցին զդդմենին, գրկեցին առան էկան, տարին դրին թագավորի տղի դիվան։

Յոթն օր, յոթ գիշեր դոլ ու զուռնա զարկին, հարսնեք էրին։

Տղեն իրեք շորս օր կմնա ախչկա խեչ, բանըմ չհասկնա. Դդումըմ կգլորվի, կէրթա էն դին, կիգա էն դին։

Օրըմ լէ կեսուր միս կծեծե էղեր, Դդում կգլորվի կէրթա օր կեսրոջ ձեռքեն առնե զսաթոս միս ծեծե, կեսուր կհերսոտի, սաթոսմը հա՛յ-հա՛յ կիգա վըր խաֆին, կգլորվի կէրթա պատի տակ կանի։

Օրըմ լէ էդոնց դրկիցանց տուն հարսնեք կէղնի, կէլնեն կէրթան հարսնեք, Դդում մինակ կմնա տուն, օր մինակ կմնա, մազ կիտա կրակ, հրեղեն ձին կիգա կանի հ՝առեշ, կհեծնի ու կքշե կէրթա հարսնեք։

Թագավորի տղեն կիշքե, օր ախչիկըմ հեծեր է զձին, էկեր է կանի ձիավորներու մեջ, կֆքրի. «Էդա ախչիկ, էն ախչիկն է, բըլե ուր ձին ու շորեր իմ տեսած ախչկան չմանին»։ Կքշե զձին, քանիմ՝ մեյդան կէրթան կիգան, կհարցու.—Ախչի՛, դու վի՞ր ախչիկն իս, հ՝ուսդե՞ն իս։

Ախչիկն կասե.—Ես Սաթոսկայու հ՝էրկրեն իմ։

Տղեն կֆքրի Սաթոսկայու հ՝էրկիր հ՝ո՞ւր է ու ճամբախըմ չկառնա հանե։

Տղեն կհարցու, օր հասկնա զտեխ, էրթա հ'ուզի բերե ուրեն. Հարսնեք յոթ-ութ օր կքաշե։

Հ'էն օր հ'իրկուն օր կէղնի, հարսնեք կֆրղի, ախչիկ շուտրմ կիգա, կհանե զուր հալվրներ, կմտնի դդմի մեջ ու կդառնա կիգա տուն։

Թագավորի տղեն ու ուր մեր լէ կիզան, մալուլին նստին. Թագավորի կնիկ միս կմանտրե օր զտտ էփե ուր տղին, Դդում կգլորվի կէրթա օր կեսրոջ օգնե։ Կեսուր հայ-հայ չախում՝ կիգա վրը գլխուն։

— Կտրուկ ծամ, դու լէ օգնող էղներ, չիգեր օգներ,—Դդում կգլորվի կէրթա, մտնի կարսի տակ։

Օլոր օր մեկ լէ կէլնին մերն ու տղեն կէրթան հարսնեք. օր կէրթան, Դդում զմազ կիտա կրակ, ձին կկանի հ'առեջ, կհանե զուր դդմենի հալվրներ, կհագնի զուր հրեղեն հալվրներ, կհեծնի զձին ու կէրթա հարսնեք, մտնի ջրընդվորներու մեջ։

Թագավորի տղեն կտեսնա օր ձիավոր մեկ լէ էկավ, կէրթա կհարցու.—Ախչի, դու հ'ո՞ւսդեն իս։

Ախչիկն կասե.—Ես Զախրկվա հ'էրկրեն իմ։

Հ'իրկուն օր կէղնի, մեկ լէ հարսնեք կֆրղի, մերն ու տղեն կդառնան, Դդումն ղաթի շուտ էր էկի։

Մերն կիգա օր զչաքմաճի դուռ բանա, հանե զուր դրուց հալվրներ դնե ներս, հագնի զուր տան հալվրներ, բան էնե, Դդում կգլորվի կիգա կանի հ'առեջ։ Օր կիգա կանի հ'առեջ, հայ-հայ՝ բալնեքրմ գլխու վրեն. Դդում կգլորվի կէրթա մտնի քունճրմ։ Կէփին ուրանց զատ, կուտին. լուսուն օր կէղնի, կէլնին կէրթան հարսնեք։

Էնդոնք օր կէրթան հարսնեք, ախչիկ մազ կիտա կրակ, ջեկ ձին կկանի հ'առեջ։

Կհանե զուր դդմենու հալվրներ դնե չաքմաճեն, կհագնի զուր հուրնի-հրեղեն հալվրներ, կհեծնի զուր ձին ու կքշե կիզա հարսնեք։

Թագավորի տղեն կիշքե օր ուր ձիավոր ախչիկն էկավ, մինակ հէսօր զհալվրներն է փոխի ու զձին կքշե կէրթա կանի խեչ։

Կասե.—Ախչի՛, դու հ'ուսդե՞ն իս։

Ախչիկն կասե.—Ես Բալնրքի հ'էրկրեն իմ։— Մեկ լէ Թագավորի տղեն՝ իշու քուռակ, չհասկնա։

Հ՝իրկուն օր հարսնեք կֆրղի, կդառնա կիգա տուն, մերն ու տղեն մալուլ-մալուլ կնստին։

Տղեն ինքն ուրեն կասե. «Վալայի, հարիր հարսնեք էղնի, ես վաղ հարսնեք չպիտի էրթամ, պիտի պատրվտիմ տուն, տեսնամ ի՞նչ կէղնի, ինչ օր հիլա կա, էդա դդմի մեջն է»։

Լուսուն կէղնի, մեր կհ՝էլնի կէրթա հարսնեք, ինք խրսդու զդուռ կբանա ու կդնե, կեռյա հարսնեք կէրթա ու դռան հ՝ետև կպատրվտի։ Կպատրվտի, կիշքի օր խորոտիկ ախչիկըմ հ՝էլավ դդմի միջեն, հանեց զուր դդմենին, դրեց շաքմաճի մեջ, հագավ զուր հրեղեն հալվրներ, հանեց ծոցեն զմազ օր իտեր կրակ, տղեն հ՝էլավ գնաց շաքմաճի վրեն նստավ ու զինք թալեց ախչկա օտաց վրեն։

— Տնաջե՛ն, ես զքզիկ իմալ տեսա, դու իմալ էզար։ Հար ե՞ր զիս չարչրիս. օր զիս էդխրդար կօլրրցներ՝ էլ հ՝ո՝րին զիս առար։

Խոսքըմ էնդորնէ, մեկ էնդորնէ, դավրջդեցին զիրար, ախչիկն համոզվավ, բերին զդդմենին թալին կրակ, նոր առան զիրար։ Ցոթ օր, յոթ գիշեր գոլ ու զուռնա զարկին, հարսնեք էրին, էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնեք ձըր մուրազին։

Աստծուց հ՝իշավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ նստող ջաղամաթին։